

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 7 ՄԱՅԻՍ, 1932

ԹԻԻ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յուսատու Նեաններ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Արդիականութեան Ծագումը եւ Փուլերը

Յովսէփ Հոդոցիսցի

Յանդուզն Գործ մը

Հինգեկնապուրկ

Օղային Ճամբորդութիւն

Ի՞նչ Պէտք է Ուսեն Գերերը

Մեր Նահապետները կը Խօսին

ՀԱՅ ԿԵՍՆՔ

ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՌԵՏՈՒՆԻ

ԹՐԳՄ. Յ. Մ. ԱՊԱՃԵԱՆ

ԹՐԳՄ. Տ. Ճ. Խ.

ԱՄՓ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԵՄԵՆ ԳՈՐԷՔ ՀԱՆԵ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի մօտ Երկու անգամ, զարեկաճ քաճճեզիճ Ե 160 զրուշ սուրի։ Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅՐ

ԳՐԵՑ՝ ԿՈՍՄԱԳԵՆԱՅԻ

Կոմմագենացիին հոռտ պատմագէտ մըն է որ գիտէ հաճելի ոճով ներկայացընել անցեալի դէպքերը։ Հատորս 15 զլուխներով գեղեցիկ եւ քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկիան շրջանին սկզբնաւորութեան մասին։ Գինն է 10 Ֆրանք Սուրիոյ համար, կէս տուար ուրիշ երկիրներու համար։ Ծաւալն է 95+ԺՁ էջ, Դիմել Վնոր Աւետարեանի հասցէին։

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ ՄԸ

Բառաշիկայ ամբան արձակուրդի ընթացքին Յուլիոս չորսէն սկսեալ՝ աւթը շաբթուան համար, մասնաւոր զաւրեթացք մը պիտի բացուի Հալէպի Ամիրիկեան Բարձրագոյն վարժարանին մէջ, Պաղատտ Կայարանին մօտ։

Աւանդուելիք նիւթերը պիտի որոշուին դիմողներու խնդրանքին համաձայն, որոնք կը կարծենք թէ՝ պիտի ըլլան հետեւեալները.—

1. Տարրաբանութիւն — Աշխատանոցի փորձերով
2. Բնագիտութիւն — աշխատանոցի փորձերով
3. Տարրական Կենսանաբանութիւն
4. Ուսողութիւն
5. Պատմութիւն
6. Անգլիերէն

Կը խնդրուի գիմել՝ որքան որ կարելի է՝ շո՛ւտ։

Աւելի Ժանրամասնութեանց համար գիմել՝ Հալէպ Գուէճի ուսուցիչներէն Տիար Ծարաճալլահ Ազրագի, կամ Պէյրութի համալսարանին ուսուցիչներէն՝ Տիար Միւնիր Սաատէյի։

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է։ Այս կէտը նկատի առնելով Վնոր Աւետարեանի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՑԱՎԷՊԵՐ

անուէն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմաւածքներ։ Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն։ Գինն է 25 զրշ. սուրիական (կամ 50 սէնթ Ամիրիկայի և Եգիպտոսի համար)։ Դիմել խմբագրութեան հասցէին։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տօքթ. Ա. Նազգաշեան 115 էջերէ բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յատուկ զուարճախօսութեամբ և սրամտութեամբ կը պատմէ իր կեանքին կարգ մը դրուագները մանկութեան շրջանէն սկսեալ մինչև հիմա։ Գինն է Ամիրիկայի համար 50 սէնթ և ուրիշ երկիրներու համար 6 ֆրանք։ Դիմել Վնոր Աւետարեանի հասցէին։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 7 ՄԱՅԻՍ, 1932

ԹԻԻ 7

ՅՈՒՍԱՏՈՒ ՆՇԱՆՆԵՐ

ԿԱՄ

ՇՈՂԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԷՆ

Տապնապալից շրջան մը բոլորելու վրայ է աշխարհ, որուն ամէն մասին մէջ անխտիր ամէն ժողովուրդ խորապէս կ'զգայ տնտեսական աննախընթաց տապնապին ճնշիչ ծանրութիւնը։ Այս պարագան՝ չատերութիւն կարծիքին համեմատ՝ իր վտանգաւոր անդրադարձումը ունեցաւ եկեղեցական, կրթական, միսիոնարական, ընտանեկան և այլն մարզերու վրայ։ Ասիկա չափով մը ճշմարիտ է։ Բայց պէտք է ընդունիլ միևնոյն ատեն թէ այս տապնապը կրնայ թւնենալ, և որոշ չափով մ'ալ ունեցած է, իր բարեբար ազդեցութիւնը ներկայ կեանքին վրայ։ Ահա այսպիսի երեւոյթի մը ականատես եղանք Միութեան այս տարուան համագումարին մէջ։

Յառաջիկայ ելեմտական տարեշրջանին համար Միութեան հասոյթներուն զգալի կերպով պակսած ըլլալու լուրը, կարծես զօրաւոր կոչ մըն էր ինքնամոփոփումի և թաքուն ոյժերը դուրս հանելու համար։ Միութեան տնտեսական ծանր պայմանները և կարելիութիւնները նիւթ եղան խորհրդակցութեան, որ վերջացաւ ոչ մէկ դաշտը լըքելու որոշ մտադրութեամբ։ Ասիկա հերոսական ճիգ մըն էր, որ մէկ արդիւնքն էր այս տնտեսական տապնա-

պին պատճառաւ զօրացած ինքնագիտակցութեան զգացումին, զոհողութեան թգիին, թաքուն կարելիութիւնները տեսնելու և օգտագործելու տրամադրութեան։

Այս տարուան համագումարին մէջ աւելի զգալի եղաւ համակրանքի, քըրիստոնէական գործակցութեան և իրար հասկացողութեան ոգի։ Ասիկա յայտնապէս տեսնուեցաւ մանաւանդ երբ Գահիրէի եկեղեցիին ծանօթ դժուարութիւնը խորհրդակցութեան առարկայ եղաւ։

Աթէնքի աստուածաբանական դպրոցէն ուսումնաւարտ չորս երիտասարդ գործիչներու հրապարակային քննութեամբ իբր արտօնեալ քարոզիչ եկեղեցականներու դասին մէջ ընդունուելը, բարեպատեհ առիթ մը եղաւ այդ դպրոցին և անոր ուսումնաւարտներուն մասին կազմուած կարգ մը կանխակալ սխալ կարծիքները փարատելու և հոգեկան միութիւն մը հաստատելու համար։

Ուրիշ առնուած քայլ մը կուգայ մեզ համոզելու թէ Միութեան գործերը ասկէ ետքը աւելի մեթոտիկ և կանոնաւոր կերպով ընթացք պիտի առնեն։ Ժողովի մէջ յաճախ կ'ընտրուին մասնա-

խումբեր որոնք մինչև յառաջիկայ Մի-
ութեան ժողովը հազիւ կրնան բերա-
նացի կամ գրաւոր տեղեկագիր մը պատ-
րաստելու համար նիստ մը գումարել:
Եւ կը տրուին որոշումներ որոնք յաճախ
անգործագրելի կը մնան: Ահա այս ան-
պատեհութեանց առաջքը առնելու հա-
մար ընտրուեցաւ ընդհանուր քարտու-
ղար մը, որ պիտի հետապնդէ տրուած
որոշումներու գործագրութիւնը: Ասի-
կայ մեծապէս պիտի օգնէ Միութեան
ժողովը աւելի արդիւնաւոր և ազդեցիկ
ընելու համար:

Միութեան արդիւնաւոր գործու-
նէութեան մասին կէտ մ'ալ պէտք է յի-
շել: Միութեան պատասխանատու շատ
մը մասնախումբերու և մարմիններու
ընտրութեանց առթիւ պէտք է ջանալ
կարելի առաւելագոյն թիւով մարդե-
րու ոյժէն օգտուելու համար: Շատ
մը պատասխանատու գործեր սակաւա-
թիւ անհատներու վրայ ծանրաբեռնել
անարգարութիւն է այդ անհատներու
հանդէպ: Միութեան ժողովին մաս-
նակցողները ընդհանրապէս անտեղեկ
են տրամադրելի և որակաւոր ոյժերու
մասին և միայն ներկաներու կուտան
քուէները, մինչդեռ ժողովի չմաս-
նակցող կարեւոր ոյժեր կան որոնցմէ ևս
պէտք է օգտուիլ: Ներելի չէ որ անհատ
մը 6, 8, 9, մնայուն մասնախումբերու
անգամակցի, մինչ անդին անզրադ կը
մնան տրամադրելի ոյժեր: Այս ան-
պատեհութեան առջև առնել դիւրին
պիտի ըլլար՝ ժողովի առաջին նստին
մէջ որոշելով ընտրութեան մասնախումբ
մը, ժողովի մէջէն և դուրսէն բոլոր ո-
րակաւոր ընտրելիներու ցանկը պատ-
րաստելու իրաւասութեամբ: Ուրա-
խութեամբ դիտելի էր որ նոր ոյժեր ևս
չափով մը գործակցութեան առնուե-
ցան:

Ուրիշ ուրախառիթ պարագայ մըն
էր Հալէպի մէջ նորակազմ Հայ Աւետ.

եկեղեցիի մը Միութեան անգամակ-
ցութեան պաշտօնապէս ընդունուիլը:
Այս եկեղեցին, որ առաւելապէս միջին
դասակարգէ 80 ի մօտ ընտանիքներէ
կազմուած է ներկայիս, թարմ և օգ-
տակար ոյժ մը ըլլալ կը խոստանայ
Հալէպի պէս ընդարձակ դաշտի մը մէջ:
Սուրիոյ և Լիբանանի մէջ կան 21 Հայ
աւետ. եկեղեցիներ և բեմեր (բայրնո-
րակազմ եկեղեցիէն), որոնք՝ բոլորը
միասին՝ իրենց մէջ կը հաշուեն մօտ
10, 000 հոգիներ: Այս ժողովուրդին
մօտ հարիւրին 40 ը կը գտնուի Հալէպ,
բաժնուած երկու եկեղեցիներու, իսկ
մնացեալը կը կազմէ Միութեան 19 ե-
կեղեցիները: Նկատի առնելով աւե-
տարանական ժողովուրդին թիւը, քա-
ղաքին մեծութիւնը եւ ժողովուրդին
ցրուածութիւնը շատ դժուար էր գոհա-
ցուցիչ արդիւնաւորութեամբ գայն հով-
աւել ներկայ երկու եկեղեցիներով:
Ասկէ տարիներ առաջ երրորդ եկեղեցիի
մը պէտք է ծնունդ տային և գայն հո-
վանաւորէին երկու եկեղեցիները՝ իբր
զաւրգաւորած ծնողներ: Լաւ է ուշ քան
երբեք: Եւ ներկայիս իսկ Հալէպի մէջ՝
կան տեղեր, խումբեր, որոնք աւետա-
րանական եկեղեցիին ազդեցութենէն
կամ բոլորովին զուրկ են և կամ պէտք
եղած չափով անկէ չեն օգտուիր: Հի-
մա երեք եկեղեցիները միատեղ գալով
պէտք է դաշտը ուսումնասիրեն և որոշ
ծրագրի մը համեմատ պէտք է գործակ-
ցին:

Ժողովին հոգեւոր պատգամները ան-
շուշտ կը կազմեն մեր ուրախութեան
մեծագոյն մասը: Հոգեկան հաճոյք
մըն էր լսել տնտեսական հաջողութեւ,
մկրտութեան իմաստին, եկեղեցիի ան-
դամակցութեան մակարդակը բարձր
պահելու և եկեղեցիին սիրելի դարձնե-
լու միջոցներու մասին խորհրդակցու-
թեան պահուն՝ հոգեւոր կեանքի տրուած
կարեւորութիւնը, գայն աւետարանա-

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ՓՈՒԼԵՐԸ

Արդիական բառը դժբախտ բառ մը եղած է. իր իսկական հին իմաստը՝ ժամանակին հետ քայլ առնող, յառաջդիմող ըսել էր։ Այս բնական, իսկական իմաստով ամէն քրիստոնէական եկեղեցին պէտք էր նորոգուել, յառաջդիմել քիչ ու շատ, գիտակցաբար կամ անգիտակցաբար։ Այս նոր քայլերը երբեմն դիւրաւ ու երբեմն պայքարով առնուած են։ Բաւոր եկեղեցիներու մէջ ալ նոյնը եղած է։ Առաջին շրջանի արդիականութիւն է այս որ այժմու իմաստը չաւնի։

Արդիապաշտութիւնը կաթօլիկ եկեղեցիին ապրանքն է. և մեր օրերուն ծագում առաւ այդ եկեղեցիի մէջ։

1888—1907 արդիական գաղափարներ յառաջ կ'երթային կաթօլիկ եկեղեցիին մէջ։ Առաջին անգամ «Մատրոնիզմ» և «Մօտրնիսթ» բառերը գործածուեցան այդ եկեղեցիին մէջ յառաջդիմասէրներուն համար։ 1907ին Պիոս Ժ. Պապը այս անունը տուաւ իր եկեղեցիին աս նորեկներուն, հերետի-

կան հուրով մշտարծարծ և սուրբ պահելու պէտքը, և Ս. Հոգիով մկրտութեան հրաւերը։ Եպիսկոպոս Լինդընի պատգամը կոչ մըն էր մեր աչքերը մեղմէ դուրս նոր հորիզոններու դարձնելու աւետարանչական խանդով մը լեցուն, իսկ Տր. Հարցլըրի և Մր. Նիքելի պատգամները մեղի յիշել տալին թէ Քրիստոս կը կապէ Ս. Գրքի յայտնութեան և հոգեւոր կեանքի առանցքը։

Ահա ժողովականները աւելի գիտակից, աւելի յոսուալից եւ կորովալիր եւ հոգեւոր պատգամներով աւելի զօրացած դարձան իրենց գործի դաշտերը։

Կոսներուն։ (Ոմանք Լէօ ԺԳ. ին կը վերագրեն Մօտրնիզմ բառին ծագումը։)

Այս շարժումը՝ ջանք մըն էր պատշաճեցնելու կրօնական գաղափարները արդի յառաջդիմութեան ոգիին հետ, և յառաջ եկած էր Ֆրանսական Յեղափոխութենէ, ազատականութենէ, և արդի քննական դպրոցականութենէ (Scholastic)։ Այս՝ կաթօլիկ վարդապետութեան (օպօէքթիւ) առարկայական արտաքին հեղինակութիւնը, արժէքը կը ժխտէր, կ'ուրանար։ (Տես՝ Վէպսթըր տիքշինէրի, էնսայքլոքիտիա Պրիթանիքա)։ Ալպէրթ Հալֆին (A. Houfin) իր «Կաթօլիկ Մօտրնիզմի Պատմութիւնը», տպուած Բարիզ 1913ին, գրքին մէջ կ'ըսէ. «Մատրնիզմ ջանք մըն է յարմարցնելու կրօնքը՝ ժամանակին ընկերական, բարոյական և այլն պահանջներուն... կը ներկայացնէ յաւիտենական հակասութիւնը (conflict) յառաջդիմութեան ոգիին և անշարժութեան (inertia) քզիին միջեւ, կրօնքը մէկ փոխալ ընթանալու և զայն բռն իրենց կեանքը ընթանալու միջեւ։ Ասոնց առաջնորդներն էին Հայր Ծորճ Թիբէլ, Հէկէլ և ուրիշներ։»

Պապական Եկեղեցին ասոնց դէմ, 1907ի Յուլիսին արձակեց առաջին արգելիչ վճիռը, որով կը հրամայէր զըպրօցներէ ու վանքերէ այս ուսուցման արտաքսումը, անհնազանդները պաշտօնանկ ընելու հաստատ որոշումով։ Կարտինալ Վէնութէլլա նոյն տարին, Օգոստոս 8 թուակիր նամակով մը, Պապին ուղարկութիւնը կացութեան վերայ հրաւիրեց, յայտնելով թէ՝ Մօտրնիզմ կը շարունակէ տարածուիլ։ Պիոս Ժ. Պապ 8 Սեպտ., 1907ին իր հռչակաւոր ընդհանուր կոնգակով խիստ հրա-

մաններ տուաւ. այս կոնդակը Pascendi-Dominici Gregis անունով ծանօթ է և պատմական արժէք ունի:

Մօսքոնիզմ իբր նոր Դպրոցականութեան Շարժում-Neoscholastic Movement — Լէօ ժ. Ի ժամանակ յարգուեցաւ: Իբրև նորութիւն 1878-1903 շրջանի միջոցին յառաջացած էր: Իր յաջորդին օրով, սակայն, սանձահարուեցաւ ինչպէս ըսինք վերը: (Տե՛ս The New International Encyclopedia).

Անգլիկան եկեղեցիին մէջ իբր «Ընդարձակ եկեղեցի» կամ «Ազատական Շարժում» (Broad Church or Liberal Movement) անունով ծաղկեցաւ, կաթոլիկ շարժումի սկսելէն քիչ մը ետքը, և անկէ ազդուած, թէև ձեռով Հռովմէական եկեղեցիէն քիչ մը տարբեր էր: Անգլիկա ու Ամերիկա ազդուեցան Գերման Դպրոցականներէ: Ներկայ իմաստով Մօտերնիզմ Գերմանիայէն տարածուեցաւ:

Մօսքոնիզմ բառը գործածական եղաւ, եւ բողոքականաց մեջ ծաղկեցաւ 1914 հնէսքը, ՈՐՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԶԱՆԸ ԿՍԿՍԻ: (Աւելի կը նախընտրէ բարոյականն ու հօգեւորը, քան եկեղեցիի դաւանանքն ու վարդապետութիւնը, (Standard Dictionary):

Մեր ազգին մէջ ալ Մօտերնիզմի մուտք գործելը բնական էր. քանզի Գերմանիա, Անգլիա, և Ամերիկա ու Հռովմէական Դուլէճներու, Աստուածաբանական ձեմարաններու մէջ աւսանողներ ունինք:

Տր. Էմբրսըն Ֆօգարթ, որ մէկ Փրօֆէսորն է Եունիւրն Սեմինարիի և քարոզիչ՝ երիցական եկեղեցիի մը, 1922 Մայիսին «Արդիականութիւնը պիտի չահի» նիւթին շուրջ քարոզեց: Ասկէ ետքը իրեն դէմ ելան, իբր հերետիկոս: Իր կողմնակիցները զատուեցան: Այժմ նիւ Եորք մի քանի միլիոն տոլար ար-

ժող անջատ եկեղեցի մը շինեցին: Ամէն կիրակի օր այդ հօյակապ եկեղեցին լեփեցուն կ'ըլլայ ունկնդիրներով:

Պայքարը 1925—26 ին աւելի հրահրուեցաւ՝ երբ ձէնին Պրայըն բարեշրջութեան դէմ իր ծանօթ դատը և վիճաբանութիւնը սկսաւ:

Ֆրենքլէնթէլիզմ Արդիականութեան դէմ բողոքելու համար յետադիմական շարժում մըն է, 1909 ին սկսած: Հաւանական է օր Պապական եկեղեցիին մէջ Պիոս ժ. Ի կոնդակէն ազդուած ըլլալով յառաջ եկած է բողոքական եկեղեցիներու մէջ: (Տե՛ս Rise of Fundamentalism, The History of Fundamentalism 1931 ին տպուած, և Զարլօ ձէֆերսընի Five Present day controversies):

Այս յետադիմական բողոքական շարժումը, Ֆրենտէնթէլիզմ, տարբեր յարանաւանութեանց մէջ տարբեր անուններով կազմուած է: Անիկայ կը կոչուի «Նօր Կալվինականութիւն» Երիցական եկեղեցիի մէջ, «Հիմնականներ» (Essentialists)՝ Միթոտական եպիսկոպոսականներու մէջ, «Ուղղափառութիւն» Արդի Մկրտական եկեղեցիի մէջ, «Աւանդապահութիւն» Բողոքական Եպիսկոպոսականներու մէջ, և այլն, իսկ «Աւետարանականութեան Ուխտը» Եզիպտոսի Հայ Աւետարանականաց մէջ: Ասոնցմէ զատ Արդիականներու դէմ պայքարելու համար ուրիշ կազմակերպութիւններ, միջյարանաւանական ժողովներ ալ կան: Երկաթայի Մոսի Պայպը Սփուլը, Լօս Անկէլէսի, Ֆիլատէլֆիայ և այլնի նման Մ. Գրքի դպրոցները պահպանողական քարոզիչներ կը պատրաստեն առաւելապէս:

Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

7

ՅՈՎՍԷՓ ՀՈՂՈՑԻՄՅԻ

Բ.

Մեր նախորդ յօդուածով տեսանք որ, պարսիկ նենգամտութիւնը իզուր աշխատեցաւ Հայ եկեղեցականութեան հեղինակութիւնը ջախջախել. պետին պատրաստելու համար իր յետին միաքերուն և հակաքրիստոնէական ծրագիրներուն:

Յովսէփ կաթողիկոս այս բոլորին դէմ պայքարելէ և կերպովմը յաղթական ելլելէ վերջ, անողոք թշնամին, առանց յաւատարմութեալ, ուղղակի մէջտեղ կը դնէ իսկական գոյնը և որոշապէս կ'առաջարկէ Հայոց, լքել քրիստոնէութիւնը և պաշտել արեգակը, զոր մատուցանել Արարչի ձեռակերտներուն և կրակին: Ահաւոր էր վայրկեանը և ճգնաժամային՝ կացութիւնը: Ամէն կասկածէ վեր էր օր, Հայ եկեղեցականութիւնը, նախարարներն ու աւագանին տեղի պիտի չտային որ և է սպառնալիքի առջև, վստահ ըլլալով իրենց հոգեւոր պետին, Յովսէփ կաթողիկոսի անսասան հաւատքին և անսահման նուիրումին՝ քրիստոնէութեան հանդէպ: Եւ իրականութիւնն ալ այդ էր, ապագան պիտի հաստատէր զայն:

Պարսիկ արքունիքը, գոռոզ և ապերասան թագաւորի մը իշխանութեան տակ, ամէն գնով կը փափաքէր վերջ մը տալ քրիստոնէութեան, այն հաստատ համոզումով որ, այդ ծրագրին յաջողութիւնը կարելի պիտի ըլլար միայն, Հայոց հաւատաւրացութեամբ: Շիտակ էր պարսկական տեսակէտը: Եթէ Հայեր խախտէին իրենց լոյս հաւատքին մէջ, շրջակայ փոքր ազգեր,

առաւել կամ նուազ Հայոց ազդեցութեան տակ ըլլալով, շուտով կրօնափոխ պիտի ըլլային և զրադաշտութիւնը պիտի ծաւալէր արեւելեան երկիրներուն մէջ, լայն քին, երկայնքին:

Յովսէփ կաթողիկոս, կացութեան լրջութիւնը ըմբռնելով, ժողով կը գումարէ Արտաշատի մէջ, ռւր ներկայ կ'ըլլան բազմաթիւ եպիսկոպոսներ, զօրագլուխներ, նախարարներ և իշխաններ և ռւր կ'որոշուի՝ ամէն գնով դիմադրել պարսկական առաջարկին և հալածանքներուն: Կը խմբագրուի մեր պատմութեան հայակապ էջերէն մին, «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր...: Եւ ոչ յերկինս այլ աստուած փոխանակիմք ընդ Յիսուսի Գրիստոսի...: Իքէն տանջանք, ի մէջ յանձնառութիւնք. սուր քո, և պարանոցք մեր...»: Եւ այլն:

Այս օգիտ զրուած երկարաշունչ նամակը կը զրկուի Պարսիկ արքունիքը, նամակ մը՝ որ քրիստոնէական հաւատալիքներու խտացեալ մէկ հանգանակըն էր: Յազկերտ Բ., Պարսից ամբարտաւան արքան, թէ՛ կը զարմանայ Հայոց այսքան յանդուգն օճին և թէ՛ կը բորբոքի զմշտափար հնոցի մը կրակին նման:

Դէպքերու հոլովոյթով, շատերուս ծանօթ պարագաներու տակ Վարդան և ռւրիշ նախարարներ Պարսկաստան կը հրաւիրուին: Տիգրանի արքայական զահլիճին մէջ, Վարդան անգամ մըն ալ կը թնդացնէ քրիստոնէական հաւատքի

ամբողջեան պատգամը ի Հայս: Սակայն՝ նկատի առնենալով որ, արդէն կարգ մը նախարարներ՝ ուրիշ պատուականներով Հայաստանէն հեռացած և ձորայ Պահակ քաղաքին մէջ (ներկայիս Տարպէնտ քաղաքը, Կասպից ծովու հարաւային կողմը) արգելափակուած էին, Տիգրանի մէջ գտնուող զօրականներ և նախարարներ կ'որոշեն՝ առ երեսու ուրանալ, Հայաստան դառնալ և հոն կազմակերպել դիմադրութիւն մը, նոյն իսկ պատերազմ մղել հզօրն Պարսկաստանի դէմ: Գիտենք նաև որ, Յագկերտ՝ մեծապէս զոհ այս անակընկալ փոփոխութենէն, 700 մոզեր կը զրկէ Հայաստան, Վարդանի և նախարարներու հետ, որոնք, այդ մոզերը՝ Անգղ զիւղին մէջ փառաւոր տփոց մը կ'աւտեն Հայ ժողովուրդէն, առաջնորդութեամբ տաքարին և եռանդուն Ղեւոնդ Երէցի: Ծանօթ է նաև մեզ Վարդանանց պատերազմը, զոր պիտի չնկարագրենք հոս, քանի որ մեր այս օրուան նիւթէն դուրս կ'իյնայ: Հայերը կը յաղթուին, Վարդան և այլ քրիստոսանուէր քաջեր կը նահատակուին, սակայն քրիստոնէական անխախտ հաւատքը մշտապէս անսասան կը մնայ Հայ լեռներու վրայ: Երկուսն ալ՝ Ֆիզիկապէս յաղթող Պարսիկը, գաղափարական հողի վրայ կը պարտուի և Հայը կը մնայ կրկին քրիստոնեայ, մինչև իր ողն աւ ծուծը:

Եւ մենք կրկին դառնանք Յովսէփ Կաթողիկոսի: Այն՝ օղբալով ինկող հերթսներու համար և օրհնելով անոնց յիշատակները, կը ջանայ սփոփել բազմաչարչար ժողովուրդը, կը քաջալերէ զանոնք և կը զինէ քրիստոնէական հաւատքի անսպառ ոյժերով:

Սակայն՝ նենգ Պարսիկը՝ իր սուգին մէջ ալ հանգիստ չի տար խեղճ հայրապետին և զինքը Տիգրան կը կանչէ, Ղեւոնդ Երէցի և ուրիշ վեց եկեղեցական-

ներու ընկերակցութեամբ, իբր զբր՝ գոհները վերջին արիւնհեղութեանց, որոնց զոհ գացեր էին 3500 է աւելի Պարսիկներ, 9 զօրագլուխներ, ի դերև հանելով Պարսկական ծրագիրները:

Յովսէփ Կաթողիկոս և իր ընկերները կը ձերբակալուին ու կը զրկուին Տիգրան, ուր բազմապիսի անարգանքներու և չարչարանքներու ենթարկուելէ վերջ, կը տարագրուին Պարսկաստանի ներսերը, Խուժաստան: Հոն ալ կ'սկսին սոսկալի զրկանքներու ենթարկել քրիստոսանուէր կղերականները, սնունդէ և ջուրէ կը զրկեն, արեւակէզ կը տանջեն, գարշահոտ նկուղներու մէջ կը թխեն... բայց իզո՞ւր... Հայուն հաւատքը կրանիթեայ ժայռերէն աւելի անսասան էր և անոր վրայ ինկող ամէն հարուած, ինքը կը փշրուէր:

Այս անգիւղի տանջանքներու սարսափին տակ, Պարսիկ պաշտօնեաներ կրկին կը մօտենան Յովսէփ Կաթողիկոսի և անոր ընկերներուն և կ'առաջարկեն հաւատքին աւրանալ և արեւը պաշտել, խոտախաղով անոնց աշխարհային ամէն փառք, վայելք և հանգիստ աւէտ կեանք... Սակայն կրկին իզո՞ւր: Ասոնք բարձրաձայն Սաղմոս կ'երգեն և Բրիտոսոս կը փառաբանեն, զարմանքի մատնելով կրակի պաշտօնեաները: Կը կապեն խեղճերուն ձեռներն աւ ոտքերը և սոսկալի պրկումներու ենթարկելով, անոնց ոսկորները կը ջախջախեն, իսկ անոնք փոխանակ թուրնալու «փոխանակ բերանոյ իմոյ, աղաղակեցին ոսկերք իմոյ կ'երգեն, իրենց ոսկորներուն ճարճափութիւնը, Աստուծոյ ուղղութեամբ աղերս մը համարելով որ, Այն փրկէ Հայ եկեղեցին անհաւատին ոտնձգութիւններէն, «մայր մեր է եկեղեցին և Հայր մեր՝ Ս. Հոգին, որ ծնաւ զմեզ» բացազանչելով:

Վերջապէս, անոնց վրայ արեւելեան բարբարոսութեան հնարած բոլոր չար-

ՅԱՆՎԱՐԻ ԳՈՐԾ ՄԸ

Եւրոպայի քարտէսին վրայ դիւրաւ պիտի գտնես Չեխո-Սլովաքիոյ հանրապետութիւնը։ Ս. Գրոց ընկերութիւնը հոն Քօչօլ անունով շրջիկ-գրածախ մը կ'աշխատցնէ։ Օր մը քաղաքի մը կառախումբէն վար իջաւ և շուկելով կայարանը խոնուած բազմութեան մէջ մնալ՝ գուրս ելաւ։ Պանդօկ մը մտաւ և գիշերուան համար տեղ մը ապահովելէ և կերակուր մ'ուտելէ յետոյ զըրքերով լի իր անբաժանելի պայուսակը հետը առած աշխատելու գնաց։

Փողոցն ի վեր քալելու ատեն պատերուն վրայ փակցուած ծանուցումներ տեսաւ՝ որոնց վրան գրուած էին «Ձեր քուէները X. Y. Z. ին տուէք»։ Կ'երեւի թէ ընտրութիւն մը տեղի ունենալու վրայ էր։ Հասաւ տեղ մը ուր

խումբ մը մարդիկ փողոցին մէջ սրահի դրան առջև կեցած էին։

— Ահա՛, ըսաւ Մր. Քօչօլ ինքնիրեն, ահա պատեհութիւն մը։ Չեմ գիտեր թէ ներսը ի՞նչ կ'անցնի կը դառնայ, բայց կրնայ ըլլալ որ մէկու մը Ս. Գիրք մը կրնամ ծախել։

Այսպէս ըսելով ներս մտաւ պայուսակն ալ հետը առած։

Բարձրաձայն ծափահարութիւններ ծայր տուին երբ ինքը սրահ մուտք գործեց։ Նախապէս չկարծեց թէ ժողովուրդը զինքը կը ծափահարէ։ Չորս կողմ նայեցաւ, բայց իրմէ զատ ոչ ոք ներս մտած էր։

Բայց ինչո՞ւ համար է այս աղմուկը, հարցուց ինքնիրեն։

Լաւ հագուած երեք պարոններ յառաջ եկան բաց ձեռքերով և թղթաւի ժպիտներով։

— Շատ ուրախ ենք ձեզ տեսնելու։ Տէր, ըսաւ անոնցմէ մին։ Ամէնքս ալ պատրաստ ենք Ձեզ մտիկ ընելու։ Տարակոյս չկայ թէ ժողովուրդը անհամբեր ըլլալ սկսաւ։ Մենք շատ վախցանք թէ մի գուցէ Ձեր գալը արգիւրդ բան մը պատահեցաւ։ Կը հաճի՞ք յառաջ գալ անմիջապէս։

Պարոններէն մին դուրս գնաց փողոցը կեցած մարդիկը ներս կանչելու և միւս երկուքը մեծադորդ ծափահարութեանց մէջ Մր. Քօչօլը բեմ առաջնորդեցին։ Նախագահը մէկէն սկսաւ խօսիլ։

— Բարեկամներ, ըսաւ, շատ կարեւոր գործի մ'առթիւ հոս հաւաքուած ենք։ Մեր երկրին ապագան այս ընտրութեան արդիւնքէն կախում ունի։ Մենք կ'ողջունենք մեր հիւրը որ մեզի խօսելու համար եկած է։ Շատ անձ-կալից ենք լսելու այն ամէնը որ այս

չարանքները գործադրուեցան, սուրով թեւեր թռցուեցան, մարմիններ ձիերու պոչին կապելով քաշկռուեցան և անոնք իրենց «արեան մէջ թաւալելով» նահատակուեցան, (Օրհնելից ՎՏԵՐ յամենայն ժամ) Սաղմոսը հրգելով։ Անոնց մատիթասացման թուականն է 454։

Ահա այսպէս կը վերջանայ մեր պատմութեան ամէնէն կարկառուն դէմքերէն մէկուն կեանքը և այսպիսի անպատմելի չարչարանքներու և սրածաւթեանց մէջէն է որ, դարեր ամբողջ՝ «մահուան ձորերէն անցնելով» մեզի կը հասնի Հայուն քրիստոնէական հաւատքը։

Ո՞րքան գուրգուրանքի արժանի է այն արդեօք, ներկայիս։ Կը խորհի՞նք այդ մասին։ Ի՞նչ կը խորհի նոր սեբունդը։

Հալեպ

ՌԵՏՈՒՆԻ

ծանրակշիռ ժամանակին մեզի պիտի ըսէ: առանց յաւելեալ բառերու կը հըրաւիրեմ զինքը հաւաքոյթին բանախօսելու համար:

Մը. Քօչօլ զարմացած մնաց: Տեսաւ որ անոնք զինքը ընտրութեան զործածակալի մը տեղը դնելու սխալը ըրած էին, և երբեք ժամանակ չէին տուած որ ինքզինքը յայտնէ: Առիթը ձեռքէ փախցնելու չէր: Որոշեց որ այս պատեհութենէն օգտուի: Երբ խօսելու համար ոտքի ելաւ, կրկին ծափահարուեցաւ:

— Բարեկամներ, սկսաւ ան, Ձեր նախադահին համաժողովում: Մեր երկիրը դժուարին կացութեան մը մէջն է: Սխալը ի՞նչ է: Երբ հիւանդ մը քննելու համար բժիշկ մը կը կանչուի, առաջին գործը կ'ըլլայ գտնել թէ ան ի՞նչ ունի: Արժէք չունի հիւանդ մարդուն դեղ տալ եթէ անոր հիւանդութիւնը չես պիտի: Մեր երկիրը ի՞նչ ունի, կամ մենք ի՞նչ ունինք: Ահա այդ է որ պիտի ըսեմ: Տազնապը հոն է որ մենք Աստուծոյ հետ լաւ չենք: Պարտինք ապաշխարել: Մենք պէտք է Աստուծոյ կամքը կատարել սորվինք:

Ժողովուրդը ապշած կը նայէր: Այս կերպ լեզու չէր որ իրենք կ'ակնկալէին: Ոմանք սկսան իրարու հետ փոփոխալով խօսակցիլ և յետոյ սրահին վարի մասէն ձայն մը լսուեցաւ:

— Օրակա՛րգը, յայտագիրը կ'ուզենք:

Մը. Քօչօլ ձեռքը երկարեց և լռութիւն խնդրեց: Յետոյ շարունակեց.

— Դուք իմ յայտագիրս կը պահանջէք, լաւ, ահա ես զայն այս գրքին մէջն աւնիմ, եթէ թոյլ տաք ինձ ձեզի քանի մը նախադասութիւն պիտի կտրգամ:

Գրպանէն փոքրիկ Նոր կտակարան մը հանեց և մէկ երկու էջ դարձնելէ յետոյ կարդաց. «Բու Տէր Աստուածդ քու բոլոր սրտէդ, քու բոլոր հոգիովդ և բո-

լոր մաքովդ սիրես: Այս է առաջին պատուիրանքը և երկրորդը ասոր կը նմանի՝ քու դրացիդ սիրես քու անձիդ պէս . . . Ամէն ինչ որ կ'ուզէք մարդիկ ձեզի ընեն դուք ալ անոնց անանկ ըրէք:» Յետոյ ըսաւ.

— Դուք ինձմէ յայտագիր կը պահանջէք, ահա՛ իմ գիտցածս այսքան է: Ներկաները իրարու հետ խօսակցիլ սկսան:

— Այդ ի՞նչ գիրք էր, կը հարցնէին մի քանին:

— Անպայման Ս. Գիրք ըլլալու է, կ'ըսէին ուրիշներ:

— Հիմայ, իմ բարեկամներս, շարունակեց Մը. Քօչօլ, կը տեսնեմ թէ դուք սխալած էք: Դուք զիս դիւանագէտի մը տեղը դրիք: Ես դիւանագէտ մը չեմ այլ ես Ս. Գրոց ընկերակցութեան մէկ գրածախն եմ և . . .

Բարձրաձայն ծիծաղ մըն էր փրթաւ սրահին մէջ: Շատերը եղածին մէջէն կատակը վայելելու տրամադրի էին, իսկ ուրիշներ բարկացած կը պոռային.

— Խաբեբա՛ն . . . դո՛ւրս քչեցէք խաբեբան:

Նախապահը շատ անհանդարտ կ'երեւէր, ուստի ոտքի ելաւ և լռութիւն խնդրեց:

— Բարեկամներ, ըսաւ, սխալ մը եղաւ և այդ սխալը մերն է: Մենք մէկէն ի մէկ եզրակացութեան մը եկանք: Երբ այս պարոնը սրահ մտաւ մենք զինքը մեր սպասած բանախօսը կարծելով իրեն երբեք պատեհութիւն չտուինք որ ինքզինքը յայտնէ: Երբեք ներելի չէ որ զինք խաբեբայ կոչենք: Բաւական ճարպիկ գտնուեցաւ մեր ըրած սխալէն օգտուելու համար և ահա եղածը աչս է: Մեծն Նաբուլէոնի սկզբունքն էր՝ «Յանդգնութիւն և միշտ յանդգնութիւն»: Ահա օրինակը մեր առջեւն է և ես անձնապէս կը հիանամ մարդու մը վրայ որ իր գործը կատարելու ոչ մի ա-

որի՞ք ձեռքէ չփախցնելու ուժն ու կա-
թողութիւնը ունի, իմ կարծիքովս կը
խորհիմ թէ մենք լաւ ըրած պիտի ըլ-
լանք եթէ այս ձեռներէց օտարականին
խօսածներուն մտիկ ընենք: Անոնք որ
ինծի համամիտ չեն կրնան սրահը թո-
ղուլ և հեռանալ:

Նախագահին խորհուրդը ժողովուր-
դէն ամանց կողմէ բարկութեամբ մեր-
ժուելով սրահը թողուցին բարձրաձայն
բողոքներով: Մեծամասնութիւնը վա-
յելեցին եղած կատակը և բարի տրա-
մադրութեամբ հաճութիւն յայտնեցին
որ Մր. Քօչօլ իր բանախօսութիւնը լը-
րացնէ:

Պէտքը չեմ տեսնար հոս նշանակել
այն ամէնը զոր խօսեցաւ: Շնորհքով և
սրամտութեամբ խօսեցաւ և շատ չան-
ցաւ երբ ամէնքն ալ ռաշի ռաշով զինքը
մտիկ կ'ընէին: Իր վերջաբանին մէջ ը-
սաւ:

—Հոս իմ պայտուակիս մէջ շատ մը
Աւետարաններ և Կտակարաններ ունիմ
և ձեր արտօնութեամբ զանոնք պիտի
ցրուեմ: Այս գրքերը ծախու են:

Բեմէն վար իջաւ և ունկնդիրներու
մէջ պտըտեցաւ: Շատ կարճ ժամանակի
մէջ իր հետը բերած գրքերուն ամէնն
ալ ծախեց: Մէկ երկու երախտագիտա-
կան խօսքերէ վերջ դուրս ելաւ: Ժողո-
վուրդը նորէն ծափահարեց զինքը մինչ
դռնէն դուրս կ'ելլէր:

Այդ իրիկուն արագօրէն տարածուե-
ցան պատահած բաներու լուրերը: «Աւ-
ետարանական Դիւանագէտը» կը կո-
չէին զայն և քաղաքին մէջ իր անցու-
ցած մի քանի օրերուն՝ ուր որ կ'երթար
ժպիտներով կ'ընդունուէր: Երբ շոգե-
կառք նստաւ իր սնտուկն ու պայտուա-
կը պարապ էին, քանի որ ունեցած գըր-
քերուն ամէնն ալ ծախած էր:

(Թարգմ.) Յ. Մ. ԱՊԱՃԵԱՆ

ՀԻՆՏԷՆՊՈՒՐԿ

Վերջին Գերմանական ընտրութեանց
միջոցին բոլոր աշխարհը, մանաւանդ
խաղաղութեան բարեկամները, անձ-
կութեամբ կ'սպասէին անոնց վերջնա-
կան արդիւնքին: Եւ երբ Հինտէն-
պուրկ աւելի քան 19 միլիոն քուէներով
հանրապետական նախագահ վերըն-
տըրուեցաւ աշխարհը շունչ մ'առաւ:
Հինտէնպուրկ Մեծ Պատերազմի առթիւ
արդէն մեծ համբաւի տիրացած էր:
Հարուտ Նիքսլընի՝ Պէրլինի Բրիտանա-
կան դեսպանի նախկին խորհրդականի՝
մէկ յօդուածէն կը քաղենք հետեւեալը:

Ծ. Խմբ.

Առաջին անգամ Հինտէնպուրկը տե-
սայ հանրապետութեան հաստատումին
տասներորդ տարեդարձին ստիժիւ: Բայ-

խըսդակի շէնքին մէջ, այն տեղը որ
Հինտէնպուրկի և իր անձնական պաշտօ-
նութեան կը ծառայէր, ռազմագաշտի
մը վրայ վրանի մը կը նմանէր: Մուտ-
քը վարագոյրներով ծածկուած էր:
Յանկարծ հրամանի մը վրայ գորշագոյն
համազգեստով երկու սպաներ վարա-
գոյրը բացին: Եւ ապա դանդաղօրէն
և տատամսելով հակայ, սեւ վերարկուի
մէջ խոշոր կերպարանք մը դուրս եկաւ,
իր ձեռնացով ձեռքին մէջ ահագին գըլ-
խարկ մը բռնելով, երբ իր պաշտօնէն-
թիւնը կազմող անձերուն մօտեցաւ,
յանկարծ կարծես թէ սկսաւ պզտիկնալ:

Պատկերներու Հինտէնպուրկը ա-
ռանց բացառութեան իշխող և զօրաւոր
նայաւածք ունի: Ան խոթող դէմք ու-
նի: Ութսուներ անց այս չուարած մար-

դը, այս հսկայ մարմինով և տատանող վեթերանը, իրապէս Թանէնպէրկի, Մասուրեան Լիճերու յաղթականը և Կոճուքըն էր։ Ո՛չ, ան չէր։ Ան պարզապէս Խիբլի ծեր Հինտէնպուրկ պապուկն էր։ Եւ զարմանալին այն է որ անիկայ միշտ հայր Հինտէնպուրկ եղած է։ Ոչ մէկ մարդու մասին այսօր քան երեւակայական առասպել մը հիւսուած չէ։

Ասկէ ետքը յաջորդաբար միքանի անգամներ ևս տեսայ Տեւոնեան հերոսը։ Իմ վրաս հազիւ կենդանի կուռքի մը տպաւորութիւնը թողուց, կուռք մը՝ որ բալթորովին կը բաղկանայ անանձնական օրկանիզմէ մը, բայց որ մկրտուած է Հինտէնպուրկ անունով և պահուած իբրեւ ցեղային թոթմ մը։ Անգամ մըն ալ, ասկէ ետքը, դէմ առ դէմ տեսնուեցայ անոր հետ։

Պատիւայի Մահարաճան (հնդկ իշխան) Պերլին եկաւ և Նախագահէն ընդունուեցաւ։ Ես իբր թարգման Մահարաճայի ընկերացայ։ Երբ Նախագահին նստած սենեակը առաջնորդուեցանք անիկայ խոնարհում մըրաւ, որուն յաջորդեց երկար դադար մը։

Նախագահը մեծ ջանքով մը ինքզինքը ամփոփեց և սկսաւ կրկնել իր դասը։ «Ձերդ բարձրութիւնը,» ըսաւ ան, «Սիխերու առաջնորդն է, ինչպէս որ կը հասկնամ։» Եւ թարգմանեցի. և Մահարաճան յայտնեց թէ Նախագահը սխալ չէր իր այս կարծիքին մէջ։ «Եւ Սիխերը,» շարունակեց Հինտէնպուրկ, «բոլոր հնդկ ցեղերուն ամէնէն քաջն են։» Մահարաճան թեթեւ խոնարհութիւն մըրաւ ասոր վրայ և աւելցուց թէ Կուրքաներն ալ մեծ քաջութեան համբաւ մը ստացած են։ Եւ հս թարգմանեցի թէ «Թափֆէր զինտ աւիտի Կուրքէն» (Կուրքաներն ալ քաջ են)։ «Անոնք ալ են», զուաց Նախագահը մեծ զարմացումով։ Եւ ես բացատրեցի թէ Կուրք

քաները Հնդկ ցեղ մ'են, Ասոր վրայ Նախագահին հսկայ զանգուածը բարձրացաւ, ուսերը շարժեցան, իր ձեռքերով ծանրօրէն ծռնկիս զարկաւ, բարձրաձայն քրքիչ մը թողուց, և իր փոքր աչքերը արախութեամբ փայլեցան։ Քանզի Կերմաներէնի մէջ Կուրքին բառը վարունգ կը նշանակէ։ Քիչ մը դժուարութեամբ Մահարաճայի կը բացատրեմ Նախագահին քրքիչը։ Մահարաճան ժպտեցաւ և պաղութիւնը անհետացաւ։ Ասկէ ետքը Նախագահը երբոր զիս կը տեսնէր կը ժպտէր։ Այսպէս այս վերջին տպաւորութիւնս սա եղաւ։ Թէ Հինտէնպուրկ խոշոր և իսկական մանուկ մըն է։

Պատերազմէն ետքը Հինտէնպուրկ իր յուշերը գրեց, որուն մէկ հասուածը սապէս կ'ըսէ։—

«Կեանքիս բախտորոշ ազդակը աշխարհի կողմէ օհէ գովասանքի փափաք մը եղած չէ։ Իմ անձնական համոզումներս, պարտականութեան զգացում մը, իմ խիղճս եղած են որ ամէնէն աւելի զիս առաջնորդած են բոլոր կեանքիս մէջ։»

Շատեր կ'ընային այս տողը գրել։ Բայց երբ զայն պրոդը Հինտէնպուրկ է մէկը գիտէ թէ ան ճշմարիտ է։ Քանզի Հինտէնպուրկ անկեղծութեան մարմնացումն է։

Անիկա ծնած է 1847 Հոկ. 2ին, հին Եռունքըր ընտանիքէ մը։ Մեծ հայրը Նաթլէոնեան պատերազմներուն մէջ ծառայած է։ Իր հայրն ալ սպայ էր։ «Ձինուորական կեանքը որոշումով ըլլալիք խնդիր մը չէր ինծի համար, իրերու բնական ընթացքով ես զինուորական եղայ», կը գրէր Հինտէնպուրկ։ Իր շուրջը տեսած զինուորական կարգապահութիւնը իր ընտանեկան կեանքին մէջ ալ կը տեսնուէր։ Թոյլ չէր տրուէր որ ան հարցումներ ընէր։ Իր հայրը, նոյնիսկ մայրը իբր զինուոր մը

կը վերաբերուէին իր հետը: Երեք բաներ միայն սորվեցուցած էին իրեն: Աստուած, Հայրենիք եւ Թագաւոր: Ուրիշ ոչ մէկ բանի կարեւորութիւն կը տրուէր: Տասն մէկ տարեկան էր երբ զինուորական դպրոց մը զրկուեցաւ, ուր տղաք կը քաջալիրուէին միայն ֆիզիքական ոյժի հաւատալու: Բոլոր իմացական ոյժը կ'անտեսուէր: «Զինուորական Դպրոցի աշակերտութեան օրերէս ի վեր կարգացած չեմ գիրք մը որ զինուորական գործերու մասին եղած չըլլայ», կը զրէ Հինտէնպուրկ: Տասնութ տարեկան էր երբ Աւստրիոյ դէմ եղած պատերազմին մէջ քաջութեան պատուանշան ստաւ: 1870ի Ֆրանզոս-Ռուսիական պատերազմին մէջ Երկաթէ խաչի նշանը ստաւ: Բարիզը պաշարող բանակին մէջն էր: Եւ Վերսալի մէջ ներկայ էր, երբ հոն Գերման կայսրութիւնը հռչակուեցաւ: Ստոր հետեւեցաւ 40 տարուան բանակային կեանքը: 1881ին, երբ Արեւելեան Բլուրուսիոյ մէջ էր, Ռուս-Գերմանական սահմանի զինուորական աշխարհագրութիւնը ուսումնասիրից: Սակաւաթիւ մարդիկ Մասսերեան ճահիճներու մէջ այնքան յաճախ բաղեր որպացած էին: Այդ տարածութեան ամէն մէկ մասնաշափը գիտէր, և ահա այս էր որ ետքը իրեն անմահ անուն մը բերաւ:

1911ին զինուորական կեանքէ քաշուեցաւ և 1914ին այս 67 տարեկան զինուորը գրեթէ անծանօթ էր Գերման հասարակութեան: Նոյն տարուան Օգոստոսին երբ վերին հրամանատարութիւնը որոշեց ուսանական յառաջխաղացումը դադրեցնել Արեւելեան Բլուրուսիոյ մէջ, այն ատեն յիշեցին Հինտէնպուրկը: Կայսրը հեռագրով հասկնալ ուղեց թէ Հինտէնպուրկ պատրաստ էր անմիջական ծառայութեան: «Պատրաստ եմ ըսաւ և անմիջապէս համազգեստը հագաւ: Լուտենտորֆ իր սպայակոյտին

պետը եղաւ: Չորս օր ետքը Թանէնպէրկի Ճակատամարտը սկսաւ: Ռուսական կորուստն էր 350,000 զինուոր, և Գերմանականը 37,000:

Իրազուծիւնը սա էր որ Հինտէնպուրկ շատ քիչ գիտէր Թանէնպէրկի յաղթութեան մասին, որ պատճաթեան ամենամեծերէն մէկն է: Փօն Բրիգուից զայն պատրաստեց, Չօր. Հոֆման զայն կատարելագործեց, Լուտենտորֆ զայն բարեփոխեց և Չօր. Ֆոն Ֆրանսուա զայն գործադրեց: Բայց Հինտէնպուրկ ծրագրեալի իբր հրամանատարը յաղթանակի հեռագիրը ստորագրեց և բոլոր պատիւը ինք ստացաւ:

Մի քանի շաբթուան մէջ իր պատկերը զրուեցաւ ամէն տան մէջ: Մեծ քաղաքներու մէջ իր փայտէ հսկայ արձանները կանգնեցին: Նա ընդհանուր հրամանատար եղաւ, Լուտենտորֆ իր աջ բազուկը:

Փօլ Ֆոն Հինտէնպուրկ մեծապէս շփոթութեան մատնուեցաւ այս չափազանցօրէն շոտլանտ ներքողներէն: Ան քաղաքագիտութենէ բան մը չէր հասկնար, և չէր ալ սիրեր զայն: Լուտենտորֆ ալ բան մը չէր հասկնար անկէ, բայց անկէ շատ կ'ախորժէր: Լուտենտորֆի ազդեցութեամբ էր որ որոշումներ տրուեցան. բայց զէշ որոշումներ էին անոնք: 1918ի աշնան պարտութիւնը եկաւ: Լուտենտորֆ խոշոր գունաւոր ակնոցներով ծպտուած Շըւէտ փախաւ: Հինտէնպուրկ մնաց: Մեծապէս շուարած վիճակի մէջ հասկացաւ թէ Պէրլինի մէջ հանրապետութիւն հռչակուած է: Կայսրին խորհուրդ տուաւ Հոլանտա փախչելու: Եւ ինք բանակին մնացորդովը հայրենիքը մընաց և ծառայութիւնները մատուցանոր: Վերսալի դաշինքէն ետքը Հոլանդի զինաց իբր ծեր, ապերձանիկ մարդ մը:

1925 ին ուրիշ կող մը եկաւ: Նա-

խաղաղ է պէտք լինելու մեծագույն խնդիրը մեր առջև դրած էր: Կոնսակցութիւնները յաջորդ մը որոշեցին մէջ անհամաձայն էին: Հինգ տէն պարզի բարեկամները խնդրեցին որ նախագահութեան թեկնածու ըլլայ: Եւ պնդեցին թէ սա իր պարտականութիւնն էր: Պատերազմն ալ այս կարգախօսով հռչակուած էր: Համաձայնեցաւ: Եւ մօտ 15 միլիոն քուէ շահեցաւ: Եւ մինչև հիմա նախագահական պալատը կը կենայ իբր գրեթէ առասպելային դէմք մը, Գերման աւանդութեան խորհրդանշանը:

Գերմանացիք գրեթէ ամէն յատկութիւն ունին, բայց անոնց կը պակսին քննադատահոգութիւնը: Բնութեամբ վիպապաշտ ըլլալով, կը սիրեն առաս-

պելական դէմքեր ստեղծել իրենց առաջինութիւնները անձնաւորելու համար: Հինգ տէն պարզ անհայտ դէմքերէն մէկն է: Անիկա մտացի չէ, և իրականին մէջ անոր մտքին գործունէութիւնը մանուկի մը մտքին գործունէութեան չափ պարզ է: Իբր նախագահ իր քայլերը միշտ ուրիշներու խորհուրդովը առած է: Բայց իր կազմուածքին և նախաւորութեան հաստատութիւնը, իր ներկայութեան հիմնալի անփոփոխելիութիւնը, իր հայրենակիցներուն հոգին կը կազդուէ: Եւ պարտականութեան ծառայութեան վսեմ զգացումը կը համապատասխանէ անոր որ ազնուագոյնն է Գերման նկարագրին մէջ:

ՕԴՈՅԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱՂՈՒԹԻՒՆ

Ներկայ գիտական աշխարհը այնքան մեծ քայլեր կ'առնէ գիտական մասնաւոր ճիւղերու մէջ որ երբ տասնեակ մը տարիներ առաջ անոնք լոկ երազ մըն էին, հիմա իրականութեան սահմանին սեմին հասած են: Այդ ճիւղերէն մէկն է հրթիռութիւնը (rocketry):

Տասնընիւթ տարիներ առաջ հրթիռը պարզ խաղալիք մըն էր, որ բնագիտական աշխատանոցներու մէջ ցուցադրութեան համար և կամ հրախաղի ժամանակ կը գործածուէր: 1902էն սկսեալ գիտուններ տարբեր ակնոցով մը մօտեցան այս խնդրոյն, այնպէս որ ներկայիս եթէ մեծ ազգերու մէջ յանդուգն փորձեր կը կատարուին օդային ճամբորդութեան և փոխադրութեան կնճռոտ հարցը լուծելու համար:

Վերջին հինգ տարիներու ընթացքին մեքենագէտ ճարտարագէտներ կանխատեսած են կառուցումը հրթիռներու որոնք Եւրոպայէն Ամերիկա նամակներ և

ճամբորդներ պիտի տանին: Այս երկայն միջոցը կարելի պիտի ըլլայ 25 վայրկեանի մէջ կտրել երկրի մակերեսէն հինգ մղոն բարձրութենէն սաւառնելով:

Ներկայիս Ֆրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ, Ռուսիոյ, Ռումանիոյ և Մ. Նահանգաց մէջ մասնաւոր գործարաններ հաստատուած են այս նպատակին համար: Անոնք ծրարագրած են նախ երկրի մակերեսէն 100 կամ 200 մղոն վեր բարձրանալ քրոնիկալ համար մթնաշերտը և յետոյ անկարգելով մը վար իջնել: Ետքը ովկիանոսէ ովկիանոս այսինքն ամբողջ աշխարհի շուրջը նամակներ (mail), վաճառականական ապրանքներ և ճամբորդներ ուղարկել: Այնպէս որ վաճառական մը պիտի կրնայ մէկ օրուայ մէջ Եւրոպայէն Ամերիկայ հրթալ, իր գործերը կարգադրել և ետ վերադառնալ: Այս ձեռնարկը եթէ յաջողի, այն ատեն լուսինն և մութրակներուն ալ հրթիռ-

ներ պիտի դրկուին որոնք փոքր ժամանակամիջոցի մը մէջ պիտի կտրեն անսահման միջոցը:

Հրթիռի թռիչքի փորձին համար ներկայիս հեղուկ թթուածին և կազդին կը գործածուի: Թթուածինը հեղուկ վիճակի մէջ պահելու համար խիստ պաղ պահելու է զայն որ սանթիկրատ զերոյէն 183 աստիճան վար պէտք է ըլլայ: Փորձով գտնուած է որ այս ջերմաստիճանէն վեր թթուածինը կ'սկսի կատաղօրէն եռալ և սատիկ ոյժ յառաջ բերել: Ասոր շնորհիւ է որ հրթիռը պիտի կրնայ սոյն արագութեամբ սրանալ: Հրթիռի թռիչքին պահուն թթուածինը պաղ պէտք է պահուի և մասնաւոր ճնշումի տակ պէտք է ըլլայ: Այս թթուածինը շարժիչ մեքենային մէջ շարունակ պէտք է հոսի սանձարձակ մեքենային արագութիւնը չգանդաղեցնելու համար: Փոքր հրթիռի շարժիչ մեքենայ (մոթոր) մը հագիւ հաւկիթի մը մեծութիւնն ունի: Այս մեծութեամբ մոթորը կը կշռէ մէկ քառորդ լիպրա և կրնայ տասը լիպրա կըշռող հրթիռ մը քսան մղոն բարձրութեամբ վեր հանել մէկ վայրկեանի մէջ:

Վերջերս գերմանացի մեքենագէտ մը մոթոր մը շինեց որ 14 լիպրա կը կշռէ և կրնայ 200 ձիու ոյժ արտադրել: Միևնոյն ուժը արտադրելու համար կազդին գործածող մոթոր մը առնուազուն 300 լիպրա կշռելու է: Ուստի ակներև կը տեսնենք հրթիռին առնահաման առաւելութիւնը:

Հեղուկ վառելանիւթ պարունակող հրթիռը երեք մասէ կը բաղկանայ.— Ա. ընդունարան կամ ամբար (թանք), վառելանիւթ կը պարունակէ: Բ. մոթորը և իր ցուկը (nozzle): Կ. մասը կը պարունակէ գործիքներ, ծանրաչափներ, ջերմաչափներ և անկարգել մը (parachute): Ասոնց մէջ ամենակարեւորը մոթորն է որ հրթիռին համե-

մատ մասնաւոր մեծութիւն մը պէտք է ունենայ. հակառակ պարագային հրթիռը կը պայթի և կը չգոյանայ:

Եւրոպայէն Ամերիկա հրթիռով ճամբորդել տեսակէտով մը դիւրին է, և շատ գիտնականներու կարծիքին համաձայն կը թուի մինչև 1940 Ատլանտեան ովկիանոսը կտրել: Իսկ վերը անսահման ովկիանին վրայ սաւառքիւ և մոլորակներու հասնիլ շատ խրթին և կնճոտ հարց մըն է: Բայց շատ հաւանական է որ մեզի յաջորդող սերունդը կը տեսնէ այս երազին իրականացումը:

Գիտութեան պատմութեան մէջ չէ եղած ոեւէ ժամանակ մը (ի բացառեալ բատիօյէն) երբ բոլոր մարդկութեան ուշադրութիւնը այսքան կեդրոնանայ գիտական ոեւէ մէկ հնարքի մը վրայ որքան հրթիռի վրայ: Աշխարհի տարբեր կողմերէն այս գործով զբաղող գիտնականներուն մասնաւոր նուիրատուութիւններ կ'ըլլան որպէսզի օր առաջ իրենց ծրագիրը ի կատար հանեն:

Այսու ամենայնիւ միջոց բառը իր իսկական նշանակութիւնը կը կորսնցնէ եւ պարզ խաղալիկ մը կը դառնայ մարդկային հանճարին:

Ա. Բ. Հ. ՓՈԼԱՏԵՍՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՈՒՏԵՆ ԳԵՐ ԵՂՈՂՆԵՐ

Սուր. Սերը առնուած կաթէ և ձրկանեղէնէ ապուր, անիւղ մսի ջուր, պահածոյ լոլիկէ և մսի ջուրէ կամ ուրը առնուած կաթէ շինուած ապուր: Այս ապուրներուն կարելի է խառնել 100—200 կրամ կանանչեղէն, բայց երբեք մի խառնեք փաթաթ, բրինձ, գարի և ուրիշ արմալք, չոր ոլոռն կամ լուբիա:

Հացահատիկ. Մէկ շերտ հացի տեղ կրնաս գործածել մէկ փաթաթ, կամ մանրուած ցորեն, մի քանի պիսքուիթ կամ պաքսիմատ:

Բուսեղեն. Օրը չորս անգամ բանջարեղէն կեր, տաք կամ պաղ, եփած կամ հում: Հում կանանչեղէնով աղացան գործածէ ամէն օր:

Հաւիթ. Օրը մէկ հաւկիթէն աւելի մի՛ գործածեր:

Մսեղեն առանց իւղի պէտք է ըլլայ:

Գանձի իւղը բոլորովին առնուած տեսակէ պէտք է ըլլայ:

Աղանդերի համար երբեք անուշիղէն կամ շաքարեղէն մի գործածեր: Կարկանդակ, պաղպաղակ և այլն մի՛ գործածէր: Ասոնց տեղ պտուղ կեր:

Ամէն շաբաթ 200 տիրհէմ պէտք է պակսի ծանրութենէդ. իւղ չափ քիչ գործածէ, ծոմ մի՛ պահեր:

Ամէն օր սերը առնուած երկու գաւաթ կաթ խմէ, 4 անգամ կամ 4 պնակ՝ ամէն մէկը 100 կրամ ըլլալով, բանջարեղէն գործածէ, երկու անգամ պտուղ գործածէ 100-200 կրամ ըլլալով ամէն անգամը, և 6-8 գաւաթ ջուր խմէ ամէն օր:

Ամէն շաբաթ կշռուէ և արձանագրէ: Եթէ չափ գէրեւ բժշկին դիմէ:

ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵՄ

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

Նահատակաց օրուան առթիւ Պատ. Յ. Զագամզեան Ապրիլ 24ին քարոզեց Գ. Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ «Մեր Նահատակները» նիւթին վրայ, իբր բնաբան ընտրելով Եբր. 11. 36-38 համարները: Երիտասարդ քարոզիչը յուզուեցաւ և յուզեց ներկաները շատելուն աչքերէն արցունքներ իլեկով:

Թիշելէ հտքը թէ եբրայեցւոյ զբաղած թուղթին ԺԱ. զլուխը եբրայեցի Նահատակներուն յիշատակին համար կոթող մըն է, յայտնեց որ յիշուած Նահատակներու այս ցանկը կարելի է երկարել Առաքեալներէն սկսած մինչև Մեծ Պատերազմի Հայ Նահատակները: Եւ կարճ, պարզ և յուզիչ մէկ նկարագրականը ըբաւ Հայկական խաչելութեան Պոլսէն մինչև Տէր Զօր, և յայտնեց թէ ամէն մէկ Հայու պարտականութիւնն է տօնել այս սգատօնը:

Այս յառաջաբանէն հտքը քարոզիչը բացատրեց Նահատակի իմաստը, լայն որ իր համոզուած ունէ մէկ ճշմարտութեան հաւատարիմ միալով իր արեան ցնովը զայն կը հրապարակէ», ըսաւ ան

«կը կոչուի Նահատակ»: Կեանքի ամէն մարզին մէջ Նահատակներ կը գտնուին, և որոնց գերագոյն մէկ յատկութիւնն է հաւատքը՝ յաճախ հասարակ հոգիներու անընդունելի, անտեսանելի, անհասկնալի կարեւորութեանց և ճշմարտութեանց մասին:

Հոս մէջտեղ դրաւ հարց մը, որ այնքան հոգիներու և միտքերու շփոթութիւն պատճառած է դաքիբէ իվեր, իրենք զիրենք որոշ արդար զատի մը համար նուիրող անհատներուն Նահատակումը, — որ չափովմը հասկնալի է — և մահաւանդ անմեղ ժողովուրդներու մանուկ, կին, ծեր, բոլորը միասին զանգուածային ընաջնջումը անպատմելի տառապանքներէ հտքը, ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել արդարութեան գաղափարին հետ: Ինչո՞ւ անմեղը կը տառապի, ահա չարիքի գարաւոր հարցը:

«Տարագրութեան տառապանքները մեր մեղքերուն արդիւնքն է խորհիւ սլխալ է: Թոքի գիրքը բողոք մըն է այս գաղափարին դէմ: Վերապրողներս մեռնողներէն աւելի արդար չէինք: Թի-

սուս ալ հակառակեցաւ այս գաղափարին (Ղուկ. 1. 1-5)»

«Ինչո՞ւ անմեղները կը տառապին: Մինչև Յիսուս՝ այս հարցումին պատասխան մը չտրուեցաւ: Յիսուս եկաւ, տառապանքի բացատրութիւնը չտրուեցաւ, տառապանքը իբր իրականութիւն ընդունուեցաւ. բայց տառապանքը յաղթանարուեցաւ:»

Բարոյիչը ապա բացատրեց թէ ինչպէս խաչը պատասխան մը կուտայ մեզի: «Խաչի վրայ կը տեսնենք փոխանորդական տառապանքի սկզբունքը, անմեղ Աստուածորդիին ուրիշներու համար տառապիլը: Մենք խաչի վրայ կը տեսնենք և գտնենք Նոր Աստուած մը որ մարդոց տառապանքները կը բաժնէ և զանոնք միասին կը կրէ: Աստուած մեզի հետ միասին տառապող հայր մըն է: . . . Անմեղներ պէտք է նահատակ իշնան որպէսզի անոնց արիւնը եկեղեցիի սերմերը ըլլայ:»

«Նահատակութեան մէջ կը տեսնենք Նոր մարդկութիւն մը ստեղծագործելուն պատակը, որուն իրականացման համար Հայն ևս իր բաժինը ունեցաւ, իր արիւնին առատ հոսումովը:» Ապա յոյս մը յայտնեց թէ Հայ տառապանքը, Հայ Գողգոթան ևս կրնայ փրկադործ ոյժ մը ըլլալ փոխանակ վրիժառու սպաննիչ ոյժ մ'ըլլալու: «Մինչև որ ասիկայ իրականանայ մեր նահատակները ներկայիս մեզի կուտան սա երեք պատգամները».

1. Նահատակութեան բազինի վրայ Առաքելական, Կաթողիկ, Բողոքական, ամէն քաղաքէ և դասակարգէ Հայեր զոհուեցան: Անոնք կ'ըսեն «Մենք մահուան մէջ միացանք, դուք եղբայրական սիրով ապրեցէք ձեր կենդանութեանը մէջ:»

2. Բիրտ ոյժի, վրէժի մի հաւատաք՝ այլ բարոյական սկզբունքներու:

3. Աստուծոյ աւելի մարդոց մի վըս-

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՊԵՐՈՒԹԻՆ

Երիտասարդաց Ակումբը 17 Ապրիլ կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին դասախօսական ժողով մը կազմակերպեց իր սեպհական ակումբին մէջ. օրուան բանախօսը Տոքթ. Սարկեան երիտասարդներու վերաբերեալ առողջապահական նիւթի մը շուրջ յոյժ շահեկան բանախօսութիւն մըրաւ, եւ յորդորեց ներկաները ապրիլ ժուժկալ եւ մաքրամաքուր կեանք, իբր օրինակ ներկայացնելով Յիսուս Բրիտանոսը:

Նոյն օրը ժամը 4ին Հայ Աւետ. Բ. եկեղեցիին մէջ խօսեցաւ Զուհեբրիոյ Հայոց Բարեկամներու Ընկերութեան և Ղազիրի Կոյրերու Ապաստանարանին նախագահը՝ Վեր. Պրզրաթոր, նիւթ ունենալով «Կիրակին», Թարգմանի պաշտօնը կատարեց Տիար Փ. Տէր Պողոսեան:

Իսկ երեկոյեան ժամը 8ին Հայ Աւետ. Ա. եկեղեցիի երիտասարդները Վեր. Ե. Կէօքկէօզեանի տան մէջ զինճարանական ժողով մ'ունեցան, նիւթ ունենալով «Բարոյականութիւն և քրիստոնէութիւն»: Ժողովը բացաւ Տիար Փ. Տէր Պողոսեան, համառօտ կերպով բացատրեց Բարոյականութիւնը

տահիք. մարդոց վստահելով չարաչար տուժեցինք:

«Երբ Ապրիլ 24ը ահա այս իմաստով ըմբռնենք անիկայ փոխանակ սգաօթի փառատօն մը պիտի ըլլայ մեզի համար:»

Մեծապէս շնորհաւորելի է երիտասարդ քարոյիչը որ Հայ անցեալ կեանքին գէպքերը իր քարոյին նիւթ կ'ընէ անոնց հոգեւոր իմաստը, և պատգամը ներշնչելով ներկաներուն:

Ունկնդիր մը

ու քրիստոնէութիւնը և թուեց Վերջնոյն առաւելութիւններն ու վեհութիւնը:

Երիտասարդ մը՝ որ բարոյական կեանք ապրած է և յետոյ ապաշխարած՝ իր անձնական փորձառութենէն պատմեց թէ ուր կը կայանայ քրիստոնէութեան հմայքն ու վեհութիւնը:

Համազգային մեծ սգատօնին, Ապրիլ 24 ի առթիւ, Վեր. Ե. Կէօքկէօղեան խնամուած քարոզ մըրաւ եկեղեցիին մէջ. հետեւեալը անոր համառօտ ամփոփումն է:

«Ապրիլ 24 ազգային մեծ սգատօն մըն է, որ մեզի կը յիշեցնէ մեր մէկ միլիոն ազգակիցներուն և սիրելիներուն անգթաբար սպաննուիլը թիւ քերու կողմէ:

«Այս առիթը շատերուն մտածել կուտայ թէ որո՞նք էին պատասխանատուները այդ մեծ ջարդին և ի՞նչ էր անոր պատճառը: Ոմանք ամբողջ պատասխանատուութիւնն ու յանցանքը թուրքին կը բեռնեն ոմանք ալ՝ Հայերուն: Ոչ մէկը և ոչ միւսը ճիշդ է. այսքանը որոշ է սակայն որ, մեր կրկնակի անխոհմտութիւնները, մեր ճարպիկութիւնն ու քաղաքական պահանջները, Հայ ժողովուրդը բնաջնջելով՝ Հայկական խնդրին միանգամ ընդ միշտ վերջ տալու թրքական դիւային ծրագիրը յառաջ բերին այդ աննախընթաց բապանդը:

«Մեռածներու համար լալէն օգուտ մը չկայ: Դաս առնենք անցեալի դառն փորձառութիւններէն, անտեղի և անխոհմտ գործերով և խօսքով մեր գոյութիւնը չվտանգել: Նոր սերունդը կըրթե՛նք, դատարարակենք քրիստոսի ազիովը, որ ա՛յ թթու ազգայնական ո՛չ ալ ազգութեանը կը ըլլան, այլ մարդասէր-հայրենասէրներ, որպէսզի անցեալի տխուր դէպքերը չկրկնուին, որպէսզի կարենանք մեր ազգային գոյութիւնը պահպանել:»

ԿԱՅԻՄ

ՀԱԼԷՊ

Էմմանուէլ Հայ Աւետ. Եկեղեցիի Ե. Ք. Զանից Ընկերակցութիւնը Ապրիլ 20, Զորեքշաբթի գիշերը ներկայացուց Եսթեր ի տրամը: Կտորը Ֆրանսացի նշանաւոր գրող Բասինի դասական երկն է թէպէտ բաւական փոխուած և կրճատումի երթարկուած: Կտորը կը պահանջէ արուեստագիտական ճաշակ, մեծ փորձառութիւն բեմադրիի և գերասաններու կողմէ, ճոխ հանդերձանք և կահաւորման նիւթեր: Դժուար է տառապող ազգի մը վիշտը, քմահաճ արեւելեան միապետի մը զայրոյթը, փառամոլ և նենգամիտ մարդու մը ատելութիւնը մարմնացնել: Ասիկայ պահանջելու իրաւունքը չունինք իրենց պարապ պահերը միայն նուիրող դպրոցի աշակերտներէ, զուրկ բեմադրութեան համար անհրաժեշտ նիւթական միջոցներէ: Մեր գնահատումը արուեստագիտական տեսակէտէ չպիտի ըլլայ: Նկատի առնելով այս ներկայացումի պահանջած երկար և ծանր աշխատանքը, բեմը զարգարելու համար կատարուած հոգածութիւնը, բոլոր գերակատարներուն նուիրեալ և եռանդազին աշխատակցութիւնը, ներկայացումին ձգած տպաւորութիւնը հանդիսականներու վրայ, պիտի ըսենք թէ ասիկայ յաջողութիւն մ'էր: Ահա ասոր համար շնորհաւորելի են բոլոր գերակատարները Բ. և Ս. Դալֆահաններ, Բ. Հասրեհան, Վ. Մարլեան, Զ. Բուպեան, Հ. Փանոսեան, Ն. Էքմէքեհան և ընկերները, և Տիարք Մ. Շնորհօքեան և Միհրան Պալիկեան որոնք կը վարէին ներկայացումը: Սըրահը լեցուն էր հանդիսականներով, որոնք աւել ատեն մեկնեցան շատ գոհ տպաւորութեամբ:

ՀԱԼԷՊԻ գաւառականի ընտրութեանց շուրջ կատարուած աղմկալից պայքարը Դաշնակցութեան և Ազգային Պօքի միջև՝ վերջացաւ առաջին յաղթութեամբ:

ՊԵՐՈՒԹԻ (Ժողովուրդ) թերթի խմբագիրներէն Տ. Խ. Քարտաշ գիշերային յարձակումի ենթարկուած և կարգ մը ահաբեկիչներու կողմէ ծանրօրէն խոշտանքուած է կը գրէ «Ժողովուրդ» :
 Փրոֆ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ, Աթէնքի Աստուածաբանական դպրոցին ոստւնչապետը Ապրիլ 26 ին Անգլիա մեկնած է, ուր պիտի անցընէ երկու ամիս : Այս միջոցին պիտի կատարէ կարգ մը ուսումնասիրութիւններ և պիտի տայ շարք մը դասախօսութիւններ Իսլամական կրօնքի մասին :

ՄԻՍ ԱՆՆ ՊԸՐՃԷՍ, Հայաստէր Անգլուհին, որ Հայերու մէջ իր աւետարանչական և ճարտարարուեստական գործը Գործու կղզիէն Դամասկոս փոխադրել կը յուսար, չկարենալով անհրաժեշտ արտօնութիւնը ստանալ Քոքլինիայի մէջ (Փիլիք Եղեռնատան) գործարան մը վարձած և զայն իր գործին յարմար վիճակին մէջ դրած է՝ հայանպաստ գործը հոն շարունակելու համար, կը գրէ Թիք Յրեկս ալ Արմինիա թերթը :

«ՅՐԷՆՏՁ ԱՎ ԱՐՄԻՆԻԱ» ընկերութեան ընդհանուր կոմիտէին մէջ երկու տարիէ ի վեր պէտք զգացուած է Հալէպի մէջ իր մէկ միսիոնարական ներկայացուցիչը ունենալու որ միևնոյն ատեն փրկջըր միսիոնիլ ինսքիթիլի պատասխանատուութիւնը ստանձնէ : Երբ պէտք եղած գումարը ապահովուի Սեպտեմբերի վերջը Հալէպ պիտի զրկուի գործիչ մը, որուն հետ հաղորդակցութեան մտած է կոմիտէն :

ՆԵՐԳԱՂԹԸ Յունաստանէ դէպի Հայաստան կը շարունակէ Գ. կարաւանը, աւելի քան 1500 հոգիներէ բաղկացած, Սելանիկէ ճամբայ ելած պիտի ըլլար Ապրիլ 26 ին Նաւը՝ 170 զաղթականներով Ապրիլ 24 ին Բիրէյէն մեկնած է Սելանիկ : Նոր Յունաստանէ չորքօրոյ կարաւան մը ևս պիտի կազմուի, որ հաւանաբար Մայիսի վերջերը պիտի մեկ-

նի : Մեկնող Հայ զաղթականներու հիւղերուն համար Հելլէն կառավարութիւնը որոշած է հատուցում մ'ընել :

ԵՂԻՍ. ԱՄԻՐ ԽԱՆԵԱՆ անուն հնդկահայ մը տակէ 50 տարի առաջ մեռած է մեծ հարստութիւն մը ժառանգ թողելով, որ ժառանգորդներուն պիտի բաշխուէր մահէն 50 տարի ետքը : 36 միլիոնի հասնող հարստութիւնը կը բաղկանայ անշարժ կալուածներէ, տուններէ և անգլիական դրամատունները գրուած գումարներէ : Ուղղակի ժառանգորդն է 84 տարեկան եգիպտացնան Տիկ. Մարիամ Ճանիկեան որ իր երկու զաւակներով Աղեքսանդրիայէն Հնդկաստան պիտի մեկնի իր ժառանգը ստանալու, կը գրեն թերթերը :

ՀԱԼԷՊԻ Երկրորդական Վարժարաններու չորրորդ տարեկան Մրցահանդէսը նախաձեռնութեամբ Հալէպ Գուլէճի, տեղի ունեցաւ Մայիս 5 ին Փրանսական զինուորական մարզադաշտը, մասնակցութեամբ 6 դպրոցներու 78 աշակերտներուն, որոնց 38 Հայեր էին : Եղան 100, 200, 400, 800 և 1500 մէթր արշաւներ, զոնդ նետել, բարձր ցատկել և երկար ցատկել : Գունդ նետելու մէջ Ա. հանդիսացաւ (10.78) Ճ. Մարկոս, (Ամերիկեան Երիցական Դպրոցէն), բարձր ցատկելու մէջ առաջնութիւնը (1.43 մէթր) շահեցաւ Ու. Թըմպէքճի, Սուլթէնիյէի Վարժարանէն, իսկ մնացած խաղերու մէջ առաջնութիւնը շահեցան Հալէպ Գուլէճի աշակերտները : — Յ. Արեղեան 100 մէթր վազքի (12 և կէս երկվայրկան) և երկար ցատկելու (5.51 մէթր) մէջ, Վ. Քէօթէքլեան 200 մէթր (27 երկվայրկան) վազքի մէջ, Ս. Մանուշակեան 400 մէթր վազքի (56 և կէս երկվայրկան), 800 մէթր վազքի (2 վայրկեան և 12 ուկէս երկվայրկան) և Զ. Բուպեան 1500 մէթր վազքի (4 վայրկեան և 50 երկվայրկեանի մէջ :

FURST MNESS Ի ԱՌՈՂ-ՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն աւ շինիչ ազդեցութեամբը ,

աւստի

անարիւններ , տկարներ , հիւսնդութենէ և վիրաբուժական գործողութիւնէ նոր ապաքինողներ , պէտք է զործածեն .

Furst mcness'**EXTRACT OF COD LIVER OIL TONIC**

կոչուած բաղադրութիւնը , որ կը պարունակէ մաքուր ձկան յուլ (կենսահիւթ «Ա» և «Դ») , մալթ , վայրի կեռաս , քիւի , ընտիր գինի , երկաթ , մանկանէզ , և այլն :

Մեծապէս ԱնՈՐԺԱՀԱՄ է , ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՑՆԷ :

ՀԱՋ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ

պէտք է զործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը ,

կը պարունակէ զանազան ծառերէ , բոյսերու արմատներէ բաղաւած հիւթիւր և մենթոլ :

Բորբոսած եւ գրգռուած կոկորդի բաղանքներու վրայ կ'ազդէ , կոկորդը եւ խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ» : Ախորժախամ եւ անուռ է :

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المستول القس ق. هاروتونيان